

**Տ. ԵԶՆԻԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԴԵՏՐՈՍՅԱՆԻ ՔԱՐՈՉԸ՝
ԽՈՍՎԱԾ Ս. ԷՇՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՏԱՐՈՒՄ
ԱՆԱՊԱԿԻ ԿԻՐԱԿԻԻ ՄԱՏՈՒՅՎԱԾ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**
(7 մարտի 2004 թ.)

«Յանուն Հօր և Որդույ և Հոգույն Սրբոյ. ամէն»:

Սիրելի հավաքացյալ ժողովուրդ.

Այսօր լրացավ Քառասնօրյա Մեծ պահքի երկրորդ շաբաթը: Մեր Եկեղեցու հայրերը Մեծ պահքի յուրաքանչյուր կիրակին դրվագն տեսական է մասնաւություն և այդ կիրակիներին Ս. Գրքի ընթերցումների միջոցով մեզ ուսուցանում են զօջում ու ապաշխարություն և այդ զոջման ու ապաշխարության միջոցով մեզ առաջնորդում դեպի մեծահոգություն և դեպի ներողամբություն:

Այս օրը մեր Եկեղեցու Տոնացույցում անվանվում է Անառակի կիրակի, որովհետք այսօր ընթերցվում է Ս. Ավետարանից այն առակը, որ պատմն է Քրիստոս և որ ծանոթ է մեզ Անառակ որդու առակը անունով (հմմբ. Ղոկ. ԺԵ 11-32): Ես վստահ եմ, որ բոլորդ է ընթերցել եք այդ առակը, քենյակ եք այդ առակի պարմությանը, և ամեն դարի, ամեն այս օրը մենք նորից անդրադառնում ենք այդ պարմությանը Հայ Եկեղեցու քններից, և խոսվում են քարոզներ՝ նվիրված այս առակին: Սակայն ամեն անզամ, երբ մենք կարդում ենք այն, ամեն անզամ, երբ լսում ենք այդ պարմությունը, մեզ համար մի նոր նրբերանգ է ի հայր գալիս և նոր մբածումներ են ծնվում: Ես ցանկանում եմ շապ կարծ, համառուսակի կերպով հիշեցնել ձեզ այդ պարմությունը և այնուհետև մի քանի մբածումներ կիսել ձեզ հետ, որոնք այսօր ես ունեցա, երբ առավորյան մի անզամ ևս ընթերցեցի այն:

Մի աշխարհում մի մեծահարուսափ մարդ էր ապրում: Նա երկու որդի ուներ: Ավետարանում մինչ այդ ոչինչ չի ասվում այս մարդու և երկու որդիների մասին: Մենք սակայն ենթադրում ենք, որ նրանք ապրում էին իբրև մեկ ընդամենք և նրանք ապրում էին հաշվ և խաղաղ: Ես ցանկանում եմ շեշտել մեկ ընդամենքի կարևորությունը, որովհետք հնում ընդամենքը շապ ավելի լայն հասկացողություն ուներ, քան թե այսօր: Այսօր ընդամենքը մարդ է, իր կինը, իր երեխաները, իսկ այն ժամանակ այդ ընդամենքի մեջ մբնում էին նաև իր ծնողները, իր եղբայրները, և եղբայրներն այն ժամանակ շապ-շատ էին, այսինքն՝ ընդամենքի անդամների թիվը կարող էր իհսուն և ավելի հոգիներ լիներ: Եվ հանկարծ երկու որդիներից մեկը որոշում է բաժանվել իր ընդամենքից:

Ավետարանին ասում է, թե նա ցանկացավ առանձին ապրել և հորից խնդրեց իրեն հասանելիք այն ժառանգությունը, որ ինքը պիտի սպանար հոր մահվանից հետո: Թեև դա սովորական և ընդունելի երևույթ չէր իին աշխարհում, սակայն հայրը ընդառաջում է իր որդու խնդրանքին, մի խնդրանք, որ անօրինական խնդրանք էր, և գալիս է նրան իր ունեցվածքի կեսը: Մենք այսպես ականաբես ենք լինում ոչ միայն հարսպության բաժանվելուն, դա

երկրորդական նշանակություն ունի այս պատմության համար, այլ ականաքետ ենք լինում ընդանիքի փլրուզվելուն:

Կրփսեր որդին վերցնում է իրեն բաժին ընկածը և մենանում օդար աշխարհ: Վյուրեան նա վարնում է ամբողջ հարսդուրթյունը: Եվ երբ անդրադառնում է, թե ինչ կապարվեց իր հեր, հիշում է այն ընդանիքը, որիբեր ինքն ապրում էր, այն ընդանիքը, որիբեր ինքը թեև որդի էր, սակայն այդ ընդանիքում նոյն լիառապ բարիքներն էին վայերում նոյնինչկ ծառաները: Նա զղում է: Նա զղում է ոչ թե այն բանի համար, որ կորցրեց այն ամենը, ինչ որ ուներ, այլ կարուրում է ընդանեկան այն մքնուրուրին, որն ինքը կորցրեց: Եվ նախընքրում է վերադառնալ և ծառա դառնալ, քան թե մնալ որդի, սակայն հեռու իր հորից և իր ընդանիքից: Եվ վերադառնում է որդին:

Դայրը, որի սիրով, անշուշդ, շաբ էր ցավել, որը շաբ էր կարուրել և գրեթե ամեն օր հիշում էր իր կորուսյալ որդուն, որին այս մահացած էր համարում, երբ տիսնում է որդուն, նա այլս որևէ բանի մասին չի մրածում: Նրա սիրով լցվում է մեծահոգությամբ և ներողամբությամբ և հրամայում է վերականգնել իր կորուսյալ որդուն իր որդիական հանգամանքի մեջ: Նրան ծիրանի է հացցնում և ձեռքին մաքանի դնում: Մորթուս են «եզն պարարակ» և խնջույք անում: Այդ պահին վերադառնում է ընդանիքի ավագ որդին, որը լսելով, թե ինչ է փեղի ունեցել, վրդովվում է և ներս չի մքնում, այսինքն՝ իր ավագ որդին չի ցանկանում կամ չի կարողանում խնդակցել իր հոր ուրախությանը, նա չի ուրախանում, որ իր եղբայրը հայլնվեց, նրա համար ուրիշ արժանիքներ գոյություն ունեին կամ արժեքներ:

Դայր զայիս և համոզում է իր զդային. «Տղաս, ներս արի»: Խսկ նա ասում է. «Ոչ, հայր: Չո այդ զավակը վախնեց քո հարսդուրթյան կեսը, իսկ դու ինձ մեկ ու չքվեցիր, որպեսզի ես իմ ընկերների հետ ուրախանամ, այն դեպքում, երբ ամբողջ կյանքում ես ծառայել եմ քեզ»: Առաջին հայացքից արդարուստ թվում է, թե ավագ որդին ճիշդ է, այսինքն՝ նա ոչ թե վիրավորված էր, որ իր հարսդուրթյունը կիսվեց, այլ վիրավորված էր այն բարբերությունից կամ այն խսդուրթյունից, որ հայրն ամբողջ կյանքի ընթացքում ցուցաբերել էր իր նկարմամբ:

Քրիստոսի առակը սակայն այլ իմաստ ունի: Քրիստոս մատնանշում է մեծահոգության պակասը ավագ որդու մոլոր, Քրիստոս մագնաշնում է ներողամբության պակասը և շեշտում դրա կարևորությունը, որովհետք այս պատմության մեջ ոչ թե նյութականը՝ ոչ յարները, հանդերը և կովերն արժեթիւ ունեն, այլ ընդանիքի վերամիավորումն արժեք ունի, այլ զղումը, ապաշխարությունը մի կրողմից և մեծահոգությունն ու ներողամբությունը՝ մյուս կողմից: Կրփսեր որդին զղաց և ապաշխարեց: Դայր մեծահոգի գլուխեց և ներեց: Սակայն ավագ որդին չկարողացավ այդ անել:

Սիրեանի հավաքացյաներ, Մեծ պահիք քառասուն օրերն այն բանի համար են, որպեսզի մենք կարողանանք անդրադառնալ այս ամենին, որպեսզի մենք կարողանանք մի կողմից զղացաւ - մեզանից յուրաքանչյուրն էլ կյանքում սխալվում և հանցանքներ է գործում, սակայն շաբ ժամանակ չենք կարողանում քաջություն ունենալ և խոսքովանել, որ՝ այն, ես սիրավեցի: Անձնական հայացքությունը երբեմն սիրավում է մեզ, որ մենք չխոսքովանենք մեր մաղթերը, մենք անձնական հայացքության գերին ենք դառնում և չենք կարողանում բացահայտել մեր սիրով: Այդ ժամանակ մյուս կողմում կանգնած մեծահոգի Դայր,

որ պարբռասք է մեզ ընդունելու, չի կարողանում ընդունել, որովհետք մենք առաջին քայլը չենք արել:

Ինչ վերաբերում է ավագ որդուն, շաբ ժամանակ մենք և ենք նման երևոյթների առջև կանցմում, երբ երկրորդականն ավելի ենք զերադասում, քան առաջնայինը, և երկրորդականին ավելի արժեք փալով՝ չենք կարողանում ցուցադրել և ցուցաբերել մեծահոգություն և չենք կարողանում ցուցաբերել ներողամբություն: Սակայն Քրիստոս կոչ է անում մեզ, կոչ է արել երկու հազար տարիներ առաջ, կոչ է արել երկու հազար տարիներ շարունակ և կոչ է անում ամեն փարի, Անառակի կիրակի օրը, որպեսզի մենք կարողանանք քաջ լինել, զի-դակցել և խոսքովանել մեր մեղքերը, կարողանանք պարբռասք լինել՝ կրելու այն ապաշ-խարությունը, որին մենք արժանի ենք այդ մեղքերի քավության համար, և միաժամանակ, որպեսզի մենք կարողանանք ցուցաբերել մեծահոգություն և ներողամբություն մեր շրջա-պարի նկարմամբ:

Եկեք միասին աղոթենք, սիրելի հավաքացյալներ, որ Ասրված մեզ բոլորիս ուժ և կա-րողություն դա, որպեսզի մենք հնդիկնենք Քրիստոսի պատվիրաններին այժմ և միշտ և հա-վիրյանս հավիրենից ամեն: